

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

"Յուլիեյ" ՓԲԸ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

«Յուսիեյ» ՓԲԸ



"Four A Consulting" CJSC

ՀԱՊ ՀԿ
Հասցե
Հեռախոս

Ռեեստր
Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,
+374(10) 52 08 47

accounting

advisory

assurance

CAA NGO Register 1-20-0219

www.4aconsulting.am
info@4aconsulting.am

Address
Telephone

Nalbandyan 50/136, Yerevan, RA
+374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Յուսիեյ" ՓԲԸ-ի բաժնետիրոջը և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Յուսիեյ" ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *"Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար"* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրի" (ՀԷՄՄԽ կանոնագիրը) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2024 թվականի հունիսի 21-ին արտահայտել է չնվազեցված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամոռեմ կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամոռությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորվել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

11 հունիսի 2025թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր-Աուդիտի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,829	2,632
Ոչ նյութական ակտիվներ		3,752	4,349
Հետաձգված հարկային ակտիվներ	5	2,407	-
		<u>7,988</u>	<u>6,981</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		1,077	775
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	60,339	40,588
Մնացորդներ դրամարկդում և բանկերում	7	242,863	144,504
		<u>304,279</u>	<u>185,867</u>
Ընդամենը ակտիվներ		<u>312,267</u>	<u>192,848</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	8.1	100,400	400,000
Կուտակված շահույթ/վնաս		11,568	(299,461)
		<u>111,968</u>	<u>100,539</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	185,846	85,005
Ընթացիկ պահուստներ		14,453	7,304
		<u>200,299</u>	<u>92,309</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>312,267</u>	<u>192,848</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 11-ին:

Տնօրեն՝  Հասմիկ Գևորգյան

Փորձագետ հաշվապահ՝  Արմինե Ասոյան



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների քաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծանոթ.		
Հասույթ	10	306,719	243,617
Այլ եկամուտներ		34	439
		306,753	244,056
Փոխհատուցում աշխատակիցներին		(195,703)	(200,601)
Արձակուրդի պահուստ		(13,013)	-
Մաշվածություն և ամորտիզացիա		(2,463)	(4,070)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		-	(1,090)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(1,794)	(4,162)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(2,190)	(3,880)
Ապահովագրական ծախսեր		(1,058)	(284)
Անձնակազմի գծով ծախսեր		(216)	(577)
Վարձակալություն		(16,214)	(13,844)
Միջոցառումների ծախսեր		(50)	-
Այլ ծախսեր	11	(63,062)	(58,288)
Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս		10,990	(42,740)
Ֆինանսական ծախսեր, զուտ	13	(1,988)	1,563
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ, զուտ	14	20	-
Ծահույթ/վնասը մինչև հարկելը		9,022	(41,177)
Ծահույթահարկի գծով եկամուտ/ծախս	15	2,407	-
Զուտ շահույթ /վնաս		11,429	(41,177)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին		-	-
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		11,429	(41,177)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	400,000	(258,284)	141,716
Տարվա վնաս 2023թ.	-	(41,177)	(41,177)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	(41,177)	(41,177)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	400,000	(299,461)	100,539
Կանոնադրական կապիտալի նվազեցում	(299,600)	299,600	-
Տարվա շահույթ 2024թ.	-	11,429	11,429
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	11,429	11,429
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,400	11,568	111,968

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հաշվետվություն

միջոցների

հոսքերի

մասին

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա շահույթ (վնաս)	11,429	(41,177)
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	2,463	4,070
Պահուստներում փոփոխություններ	7,145	(5,369)
Շահութահարկի գծով ծախս/եկամուտ	(2,407)	-
Ֆինանսական գույք եկամուտ	1,988	(1,563)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	(20)	-
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	20,598	(44,039)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(20,856)	130
Պաշարների փոփոխություն	(302)	1,104
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	101,951	(34,897)
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	<i>101,390</i>	<i>(77,702)</i>
Վճարված տոկոս	(4,058)	(2,371)
Վճարված շահութահարկ	-	-
<i>Գործառնական գործունեությունից ստացված գույք դրամական միջոցներ</i>	<i>97,333</i>	<i>(80,073)</i>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,064)	(1,324)
Ստացված տոկոսներ	2,070	3,934
Հետաձգված ծախսեր	-	-
Տրված կանխավճարներ	-	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված գույք դրամական միջոցներ</i>	<i>1,006</i>	<i>2,610</i>
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Պարտավորություններ օգտագործման իրավունքի ձևով	-	-
<i>Ֆինանսական գործունեության համար ստացված գույք դրամական միջոցներ</i>	<i>-</i>	<i>-</i>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գույք աճ/նվազում	98,339	(77,463)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	20	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	144,504	221,967
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	242,863	144,504

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 26-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: